ՋԱՀԻԶ
(մահ. 869)

Արու Օսման Ամր իբն Բահր ալ-Ֆուկայմի ալ-Բասրի իբն Բահր ալ-Ջահիզը 9 -րդ դարի լայն մտահորիզոնով գիտնականներից է, որի աշխարհագրական երկերը ընթերցվում են մեծ հետաքրքրությամբ:

Ծնվել է Բասրայում մոտ. 776-ին մի համեստ ընտանիքում, որը հավանաբար հարեչական ծագում ուներ: Մանուկ հասակից նա ուսման հանդեպ մեծ ձգտում է ցուցաբերում հետևելով բանասիրության, քերականության ու պոեզիայի բնագավառում ժամանակի նշանավոր դեմքերին: Ալ-Ջահիզը շուտով դարձավ արաբերենի և ավանդական մշակույթի գիտակ, իր ժամանակի ամենազարգացած ու առաջադեմ անձերից մեկը:

Նա հեղինակ է մեծադիր մի հատորի, որը կոչվում է «Գիրք կենդանիների մասին» (Քիթաբ ալ-Հայավան), որտեղ նա հաղորդում է կենդանաբանական, մարդաբանական ու ազգագրական բնույթի տեղեկություններ:

Ալ-Ջահիզի հիմնական աշխարհագրական երկն է՝ «Գիրք մեծ քաղաքների ու երկրների հրաշքների մասին» (Քիթաբ ալ-Ամսար ուա Աջաիբ ալ-Բուլդան), որից սակայն պահպանվել են պատառիկներ, թեև ժամանակին նրանից օգտվել են այլ աշխարհագրագետներ (Իբն ալ-Ֆակիհ և այլք):

Համեմատաբար ավելի ուշ հայտնաբերվեց ու շրջանառության մեջ դրվեց ալ-Ջահիզի մի ուրիշ աշխատություն՝ «Հայացք վաճառականության վրա» (Ալ-Տաբասսուր բի-լ-Տիջարա), որը կարելի է համարել տնտեսական աշխարհագրության ստեղծման մի յուրահատուկ փորձ: Այս երկի ձեռագիրը հայտնաբերվեց Թունիսում արաբ գիտնական Հասան Հուսնի իբն ալ-Վահհաբի կողմից և հենց նա էլ հրատարակեց Դամասկոսի գիտությունների ակադեմիայի պարբերականում: (Abd al-Wahhab, RAAD. XII)

Ներկա թարգմանությունը կատարված է հետևյալ հրատարակությունից. Djahiz, at-Tabassur bi-l-Tidjara, Damas, 1932.

(Крачковский, IV, стр. 123-126, al-Djahiz, *Ch. Pellat EOI, CD-ROM, (II: 385a))*